ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ
(Էմմա Կոստանդյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)*

Պատմական գիտությունների դոկտոր Էմմա Կոստանդյանի՝ որպես ճանաչված ու սիրված պատմաբանի կայացումը սկսել է դեռևս Կիրովականից (այժմ՝ Վանաձոր), իր հայրական ընտանիքից: Ծնողները մեծ տեղ էին տալիս իրենց երեխաներին հայրենի պատմության տարբեր ժամանակաշրջաններին ծանոթացնելուն, ազգային գիտակցությամբ և հայրենասիրությամբ օժտելուն: Հետագայում նվիրվելով հետազոտական գործունեությանը՝ Է. Կոստանդյանը կարողացավ իր գիտելիքները ի սպաս դնել հայոց պատմության, մասնավորապես հայ եկեղեցու և նրա ճանաչված մի շարք գործիչների՝ Մկրտիչ Խրիմյանի, Գարեգին Սրվանձտյանցի, Մաղաքիա Օրմանյանի և այլոց հոգևոր, գիտամանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեությունը հասարակության լայն խավերին ներկայացնելու բարդ և պատասխանատու գործին:

Է. Կոստանդյանը ծնվել է 1934 թ. հուլիսի 23-ին Կիրովականում: 1941 թ. ընդունվել և 1951 թ. ոսկե մեդալով ավարտելով քաղաքի թիվ 1 միջնակարգ իգական դպրոցը՝ նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, որն ավարտել է 1956 թ.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կադրերի բաժնում պահվող Է. Կոստանդյանի անձնական գործում գտնվող ինքնակենսագրականում հոբելյարը հետևյալն է գրել. «Գերազանց առաջադիմությամբ և ակտիվ հասարակական աշխատանքներ կատարելու համար II կուրսից [մինչև] V կուրսը ներառյալ ստացել եմ Բելինսկու անվան թոշակ ... : Ինքնակենսագրող՝ Է. Ա. Կոստանդյան»:

1958 թ. սեպտեմբերի 1-ից Է. Կոստանդյանն աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնում որպես լաբորանտ, իսկ 1964 թ. դեկտեմբերի 1-ին ընդունվում է արտադրությունից կտրված ասպիրանտուրա՝ «Հայ ժողովրդի նոր պատմություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար է նշանակվում ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը: Նկատենք, որ այդ տարիներին բաժինը ղեկավարում էր ականավոր գիտնական, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, որն իր մեծ ավանդն է ներդնում երիտասարդ գիտաշխատողի կայացման գործում:

---

* *Հոդվածը տպագրության ընթացքում էր, երբ Է. Կոստանդյանը վախճանվեց:*

1960-ական թվականների ազգային վերածննդի ժամանակաշրջան էր: Խրուշչովյան համեմատաբար ազատական տարիներին հայ պատմաբանները հնարավորություն են ունենում իրականացնել այնպիսի թեմաներով գիտահետազոտական աշխատանքներ, որոնց մասին նախկինում չէին կարող երազել: Նոր պատմության բաժնի աշխատակիցներին առաջադրվում են թեմաներ, որոնք հիմնականում վերբերում էին XIX-ից XX դարերի հայ ազատագրական շարժումների պատմությանը, հնարավորություն է տրվում ներկայացնել նաև հայ հոգևորականության դերն ու տեղը օսմանյան բռնապետության դեմ պայքարում: 1965 թ. հոկտեմբերի 29-ին բաժնի կողմից Է. Կոստանդյանի համար թեկնածուական ատենախոսության թեզ է հաստատվում «Գարեգին Սրվանձտյանցի հասարակական-քաղաքական գործունեությունը»: Ճիշտ է, 60-ական թվականները ստալինյան բռնապետության տարիները չէին, սակայն մեծ համարձակություն էր հայ հոգևորականի գործունեությունը լուսաբանող հետազոտություն առաջարկել երիտասարդ գիտաշխատողին: 1971 թ. հաջողությամբ պաշտպանեց ատենախոսությունը՝ նվիրված մեծանուն ժողովրդագետ Գարեգին Սրվանձտյանցին, 1979 թ. հրատարակեց մենագրությունը՝ օժտված հարուստ արխիվային վավերագրերի տվյալներով:

Ինստիտուտի գիտական խորհրդի և կուսակցական ժողովների նիստերում նա հաճախ հանդես է գալիս ելույթներով ու զեկուցումներով՝ պաշտպանելով արցախահայության արդարացի պահանջները:

Է. Կոստանդյանը 1999 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը» թեմայով, որը որպես մենագրություն լույս տեսավ 2000 թ. և վերահրատակվեց 2008 թ.: Մեզանում առաջին անգամ էր համակողմանի ուսումնասիրվում Մ. Խրիմյան հասարակական գործչի, եկեղեցականի ու գրողի գործունեությունը: Պատմաբանը լուսաբանում է ժողովրդական շահերի արի պաշտպանի վարած հսկայածավալ աշխատանքը:

2003 թ. լույս է տեսնում Է. Կոստանդյանի հերթական աշխատությունը՝ «Կոստանդնուպոլսի «Արևելք» օրաթերթը»:

Տիկին Էմման հեղինակ է մոտ երկու հարյուր գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանում: Հայտնի են նաև նրա հեռուստա-ռադիո ելույթները, որոնք հասարակությանը ներկայացնում էին հայ ժողովրդի պատմության տարբեր դրվագները:

Է. Կոստանդյանը 2003-ից 2012 թ. գլխավորել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժինը: Նրա պաշտոնավարության շրջանում բաժինն ունեցավ լուրջ ձեռքբերումներ հայոց պատմության հանգուցային խնդիրների նորովի ու անաչառ լուսաբանության բնագավառում, զգալի աշխատանք տարվեց Հայոց պատմության ակադեմիական երրորդ հատորի ստեղծման ուղղությամբ: Պատմաբանը միաժամանակ դասախոսել է Երևանի տարբեր բուհերում:

Է. Կոստանդյանը շարունակում է հասարակական ակտիվ գործունեությունը: 2010 թ. ՀՀ պաշտպանության նախարարությանն առընթեր գործող Հասարակական խորհուրդը կազմակերպում է հանրապետության բուհերի և գիտական հաստատությունների աշխատակիցների այցելությունները զորամասեր,

որտեղ նրանք պետք է զինծառայողների առջև հանդես գային դասախոսություններով: Այս խմբում ընդգրկվում է նաև տիկին Էմման:

Ներկայումս Է. Կոստանդյանը շարունակում է իր գիտական հետազոտությունները: Այժմ մենագրություն է պատրաստում՝ նվիրված Մաղաքիա Օրմանյանի հասարակական-քաղաքական ու գիտական գործունեությանը:

Հայ առաքելական եկեղեցին բարձր է գնահատել Է. Կոստանդյանի կատարած գիտական աշխատանքը և նրան պարգևատրել է «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

2013 թ. հրատարակվել է Է. Կոստանդյանի «Հայագիտական ուսումնասիրությունները», որի առաջաբանում Պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից-անդամ, պ. գ. դ., պրոֆ. Աշոտ Մելքոնյանը փաստել է. «Էմմա Աշոտի Կոստանդյանը վաստակել է հայագետների ընդհանուր սերն ու հարգանքը, իր պատվաբեր տեղն զբաղեցրել հայ պատմաբանների շարքում: ... անցել է գիտնականին վայել ճանապարհ»:

Շնորհավորելով պ. գ. դ., գլխավոր գիտաշխատող Էմմա Կոստանդյանի ծննդյան 80-ամյակը՝ ցանկանում ենք նրան երկար տարիների կյանք և բազմաբեղուն գործունեություն:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ